

Դասապլան

Դնեստրի պատերազմի ազդեցությունը Մոլդովայի Հանրապետության վրա

Չեղիսակներ

Ալեքսանդրու Սեու	Միհայ Էմինեսկու ճեմարան, Էդինես, Մոլդովայի Հանրապետություն
Մարիա Սմիրնովա	Տվարդիչա ճեմարան, Տվարդիչա, Մոլդովայի Հանրապետություն
Մարիա Ստեփանյանց	Կոնստանտին Ստերի ճեմարան, Սորոկա, Մոլդովայի Հանրապետություն
Վերա Բալան	Պետրե Շտեֆանուցա ճեմարան, Լալովանի, Մոլդովայի Հանրապետություն
Սերջու Սուվակ	Չիշմեա գիմնազիա, Չիշմեա, Մոլդովայի Հանրապետություն
Տարիք	15-16 տարեկան
Տևողություն	45 րոպե
Չիմսական հարց	Որո՞նք են Դնեստրի պատերազմի հետևանքները Մոլդովայի Հանրապետության համար:

Ամփոփ նկարագրություն

Սույն դասապլանը ներկայացնում է 1992թ-ից ի վեր Դնեստրի կամ Մերձդնեստրի պատերազմի տարատեսակ հետևանքները Մոլդովայի Հանրապետության համար: Սովորողները կբացահայտեն, որ պատերազմը մեծ ազդեցություն է ունեցել երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի վրա և այսօր էլ ազդում է այդ ոլորտների վրա Դնեստրի երկու կողմերում: Մանկավարժական մոտեցումը ներառում է աշխատանք գրավոր պատմական աղբյուրների, պատկերների, միջազգային կազմակերպությունների պաշտոնական դիրքորոշումների և ակնատեսների հետ: Այն նաև հիմնված է կրթական ծրագրի ազգային տեսլականի վրա, որն ուղղված է ժողովրդավարական արժեքների և պատմական անցյալի ուսուցանման միավորմանը:

Կրթական վերջնարդյունքներ

Սովորողը կկարողանա.

- բացատրել Դնեստրի պատերազմի ազդեցությունը Մոլդովայի Հանրապետության վրա,
- գնահատել պատերազմի քաղաքական, տնտեսական, մշակութային և սոցիալական ազդեցությունը Մոլդովայի Հանրապետության զարգացման վրա,
- զարգացնել քննադատական կարողություններ՝ պատերազմի և այլ պատմական իրադարձությունների վերաբերյալ ապատեղեկատվությունը և սխալ մեկնաբանությունը ճանաչելու և դրա դեմ պայքարելու համար,
- մեկնաբանել հասարակության վրա պատերազմի թողած ազդեցությունները:

Մանկավարժական առաջարկություններ

Այս դասապլանը մշակվել է՝ հիմնվելով այն սկզբունքի վրա, որ Դնեստրի պատերազմի վերաբերյալ հիմնական/բազային գիտելիքներն արդեն ձևավորված են՝ ներառյալ ժամանակագրությունը, պատճառները, տարբեր կողմերը և հիմնական անձինք: Այսպիսով՝ դասապլանը կենտրոնանում է պատերազմի հետևանքների և ոչ թե պատճառների վրա: Մոտեցումը մշակվել է՝ ցույց տալու պատերազմի կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը քաղաքականության, տնտեսության, հասարակության և մշակույթի վրա Մոլդովայի Հանրապետությունում, այդ թվում՝ Մերձդնեստրում: Դասապլանի դիտանկյունն ազգային է, սակայն կարող է մեկնաբանվել նաև տեղական տեսանկյունից, հատկապես պատերազմական գործողություններին մոտ գտնվող կամ պատերազմի ազդեցությունն անմիջականորեն կրած շրջաններում:

Նման իրավիճակում ուսուցիչները կարող են ռեֆլեքսիվ մոտեցում ցուցաբերել. կարևոր է հաշվի առնել իրադարձության արդիականությունն ու տրավմատիկ կողմը դասարանի առանձին սովորողների համար: Հնարավորության դեպքում խորհուրդ է տրվում ընդլայնել և մանրամասնել պատերազմի առաջացրած խնդիրների շրջանակը, նաև տեղական համատեքստում: Վերջապես, եթե ժամանակը թույլ է տալիս, ուսուցիչները կարող են անդրադառնալ հիշողության մշակույթին, որ պատերազմի շուրջ ձևավորվել է հասարակության տարբեր ոլորտներում, օրինակ՝ քաղաքացիական անձանց, զինվորականների, երեխաների, փախստականների և տարբեր մասնագիտական խմբերի շրջանում:

Գործողություններ

Փուլ I

Թեմայի ներածություն

5 թույլ

Ուսուցիչը քարտեզի վրա ցույց է տալիս Մոլդովայի ներկայիս տարածքային բաժանումը: Սովորողներն ուսուցչի հետ ստեղծում են կարճ ժամանակացույց, որտեղ նշում են 3-4 հիմնական շրջադարձային կետեր, որոնք ազդել են նման բաժանման ձևավորման վրա 1989–1994թթ:



Մոլդովայի Հանրապետության վարչաքաղաքական քարտեզը:

Փուլ II

Խմբային աշխատանք աղբյուրների հետ

25 թույլ

Սովորողները բաժանվում են 3 խմբի, և յուրաքանչյուրին տրվում է աղբյուրների փաթեթ՝ կարդալու և վերլուծելու համար (տե՛ս Հավելված I):

Խմբերն իրենց առաջադրանքի վրա զուգահեռաբար աշխատում են 10 թույլ՝ անդրադառնալով ստորև բերված հարցերին: Այնուհետև յուրաքանչյուր խումբ ունի 5 թույլ՝ աղբյուրներն ամփոփելու և աշխատանքը մյուսներին ներկայացնելու համար:

Խումբ 1

Քաղաքական ազդեցություն

1. Աղյուսակում գրե՛ք պատերազմի վերաբերյալ աղբյուրներում ներկայացված մոլդովական և մերձդնեստրյան դիրքորոշումները:
2. Գնահատե՛ք պատերազմի քաղաքական ազդեցությունը Մոլդովայի Հանրապետության համար: Գրառե՛ք ձեր պատասխանը:

Խումբ 2

Տնտեսական ազդեցություն

1. Ուշադիր գնահատե՛ք աղբյուրները և նշե՛ք տեղեկությունը, ինչպես առաջարկված է ստորև.

✓	տեղեկություններ, որոնք հաստատում են ձեր իմացածը
-	տեղեկություններ, որոնք հակասում են ձեր իմացածին կամ տարբերվում են դրանից
+	տեղեկություններ, որոնք նոր են ձեզ համար
?	տեղեկություններ, որոնք անհասկանալի են և պետք է պարզաբանվեն

2. Որոշե՛ք, թե Դնեստրի պատերազմն ինչ ազդեցություն է ունեցել երկու կողմերի տնտեսության վրա: Գրե՛ք ձեր պատասխանը:

Խումբ 3

Մշակութային ազդեցություն

1. Ազգային ինքնության ո՞ր խնդիրները պատերազմի պատճառ դարձան (կամ սրեցին այն):
2. Տարածաշրջանում ամենօրյա կյանքի ո՞ր կողմերի վրա է ազդում գրեթե խնդիրը (լատինատառ կամ կիրիլիկ):
3. Ձեր կարծիքով որևէ խմբի համար որքանո՞վ է կարևոր մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորություն ունենալը: Որքանո՞վ է կրթությունը անձի ինքնություն ձևավորում:
4. Ըստ աղբյուրների՝ որո՞նք են ամենակարևոր խնդիրները, որոնց ռումիներենով կրթություն իրականացնող դպրոցները բախվում են Մերձդնեստրում: Ինչպե՞ս կարելի է դրանք լուծել:

Սովորողներն աշխատում են միասին՝ ուսուցչի ուղղորդմամբ, որը գրատախտակին երեք շրջան է գծում հետևյալ վերնագրերով՝ «Քաղաքական ազդեցություններ», «Տնտեսական ազդեցություններ», «Մշակութային ազդեցություններ»:

Օգտագործելով իրենց գիտելիքը և դասի ժամանակ ձեռք բերած տեղեկությունները՝ սովորողները պետք է ձևակերպեն կարճ հաշվեկշիռներ՝ երեք ոլորտներում պատերազմի հետևանքները բացատրելու համար: Ուսուցիչը դրանք գրում է համապատասխան շրջանակներում:

Փոկ IV

Առաջարկվող տնային առաջադրանք

5 թույլ

Սովորողներին հանձնարարվում է իրենց ընտանիքի անդամի հետ հարցազրույց անցկացնել Դնեստրի պատերազմի վերաբերյալ: Ուսուցիչը կարող է որոշ ուղղորդող հարցեր առաջարկել (տե՛ս Հավելված II), և սովորողները իրենց ստացած պատասխանների առնչությամբ կարող են պարզաբանումներ կամ հավելյալ տեղեկություն խնդրել: Այս աշխատանքի ընթացքում սովորողները պետք է ուսումնասիրեն պատերազմի ընկալումը սոցիալական, մասնագիտական և տարիքային տարբեր խմբերում: Սովորողները կարող են հարցազրույց անցկացնել իրենց ծանոթ այլ մարդկանց հետ, որոնք կապ են ունեցել իրադարձության հետ: Հարցերը կարող են հարմարեցվել ընտանեկան/տեղական համատեքստին: Այս աշխատանքը կապահովի, որ սովորողները դասասենյակից դուրս ավելի լայն թեմայի շուրջ խորհեն:

Գնահատում

Երկրորդ փուլի ժամանակ սովորողներին տրվում են հարցեր և առաջադրանքներ: Հարցերին պատասխանելով և առաջադրանքները կատարելով՝ նրանք սովորելու տարբեր մեթոդներ կօգտագործեն, որոնք կենտրոնանում են պատճառաբանման/փաստարկման, քննադատական մտածողության և աղբյուրների գնահատման վրա:

Տնային առաջադրանքը կազմված է այնպես, որ սովորողները կարողանան գնահատել նույն իրադարձությունների վերաբերյալ տարբեր տեսանկյուններ և ներկայացնել դրանք՝ օգտագործելով բազմատեսանկյուն մոտեցում:

Բառարան

1992 թ. Չինադադարի համաձայնագիր – փաստաթուղթ՝ ստորագրված Մոլդովայի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև, որը զինադադար սահմանեց և նշանավորեց զինված հակամարտության ավարտը:

Դնեստրի ձախ կողմը – Դնեստր գետի ձախ ափին (գետի հոսանքի հյուսիս-հարավ ուղղությամբ) գտնվող Մերձդնեստրի խոսակցական անվանումը:

Պլանային տնտեսություն – տնտեսական համակարգ, որտեղ պետությունն է կառավարում տնտեսությունը և կայացնում ապրանքների և ծառայությունների արտադրության, բաշխման և սպառման վերաբերյալ բոլոր որոշումները:

Պրոմո-ԼեՔՍ – ոչ կառավարական կազմակերպություն, որի նպատակն է Մոլդովայի Հանրապետությունում ներառյալ Մերձդնեստրում, առաջ մղել ժողովրդավարությունը՝ խրախուսելով և պաշտպանելով մարդու իրավունքները, մշտադիտարկելով ժողովրդավարական գործընթացները և հզորացնելով քաղաքացիական հասարակությունը: Պրոմո-ԼեՔՍ-ը հիմնվել է 2002 թ., շահույթ չհետապնդող, քաղաքականապես անկախ կազմակերպություն է, որը գործում է երկրի ամբողջ տարածքում:

Անջատողականություն – շարժում՝ ուղղված անկախ պետության կամ ինքնավար շրջան ստեղծելուն:

Խուճբ 2 Տնտեսական ազդեցություններ

Աղբյուր Ա

Աղբյուր

Nistor, E. (2017) 'Răz-boiul de pe Nistru: cauze, actori, consecințe' [Դնեստրի պատերազմը. պատճառները, դերակատարները, հետևանքները], Արևելյան Եվրոպայի

Աղբյուր Բ

Աղբյուր

Platzforma, (2017) '25 de ani de la Războiul de pe Nistru: greșelile Chișinăului de la începutul conflictului transnistrian' [25 տարի Դնեստրի պատերազմից. Քիշինևի սխալները Մերձդնեստրյան հակամարտության սկզբից ի վեր], 6-ը մարտի, <https://platzforma.md/archive/36287>, դիտվել է 2023 թ. հոկտեմբերի 4-ին:

Աղբյուր Գ

Աղբյուր

Gorelova, E. & Șelari, G. (2009) Costurile conflictului transnistrean și beneficiile soluționării lui [Մերձդնեստրյան հակամարտության գինը և դրա լուծման օգուտները]: Քիշինև CISR, <https://www.cisr-md.org/pdf/Report%20ROM%20Master%20Draft%20vEG.pdf>, դիտվել է 2023 թ. հոկտեմբերի 4-ին:

Մոլդովական ԽՍՀ-ում և Մերձդնեստրում տնտեսության գործառույթի վերաբերյալ նկատառումներ

«Պատմությունը մեզ սովորեցնում է, որ մենք պատմությունից ոչինչ չենք սովորում»: Գերմանացի փիլիսոփա Յեգեյի ձևակերպած այս պարադոքսն է մտքիս գալիս, երբ մտածում եմ Մոլդովայի անցյալ և ներկա խնդիրների, ինչպես նաև վերջինիս առաջնորդների քաղաքական պատասխանատվության մասին: 1980-ականների վերջը շրջադարձային էր բոլոր արևելաեվրոպական երկրների համար: Մոլդովական ԽՍՀ և Մերձդնեստրի ամբողջ քաղաքական, տնտեսական և ռազմական կյանքն առավելագույնս վերահսկվում էր՝ հետևելով միայն մոսկովյան կենտրոնական մարմիններից եկող հրահանգներին: Այս տնտեսական մոդելն այսօր կոչվում է ուղղորդված/պլանային տնտեսություն:

Դնեստրի երկու կողմերում պատերազմի տնտեսական ազդեցության վերաբերյալ վիճակագրություն

Չինված հակամարտությունը հանգեցրեց Դնեստրի երկու ափերում տնտեսական իրավիճակի վատթարացմանը և նպաստեց 1990 թ. սկսված տնտեսական ճգնաժամի խորացմանը: Ընդհանուր համախառն ներքին արդյունքը (արտադրված Դնեստրի երկու ափերին) 1992-ին նվազեց 29%-ով (1991-ին՝ 17%-ով, 1993-ին՝ 1%-ով)։ արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը կրճատվել է 27 %-ով (1991-ին՝ 11 %-ով, 1993-ին կրճատումներ չեն գրանցվել), փոխադրվող ապրանքների ծավալը նվազել է 51 %-ով:

Մերձդնեստրի տարածաշրջանում բազմաթիվ ձեռնարկությունների գործունեությունը կաթվածահար է եղել հակամարտության գոտում ավերածությունների և ընդհանուր տնտեսական ապակայունացման պատճառով, հատկապես Բենդեր և Դուբասարի քաղաքներում:

Մերձդնեստրյան կողմի տվյալներով՝ ընդհանուր առմամբ ավերվել կամ վնասվել են 218 արդյունաբերական, տրանսպորտային և շինարարական ձեռնարկություններ (այդ թվում՝ 46 ձեռնարկություն Բենդերում), վնասվել են 8 կմ մալուխ և 35 կմ օդային էլեկտրահաղորդման գծեր, 15 կմ ջերմային ցանցեր և 10 էլեկտրակայան: Բենդերում զգալիորեն նվազել է մալուխի արտադրությունը: Դնեստրի երկու ափերին էլ եղել են զազամատակարարման և էլեկտրամատակարարման ընդհատումներ: Անջատվել են 330 կՎտ և 110 կՎտ հզորությամբ էլեկտրահաղորդման գծեր, որոնց միջոցով էլեկտրաէներգիա էր մատակարարվում Դնեստրի ծախ կողմից աջ կողմ:

Մոլդովական ազգային արժույթի ներդրում (մոլդովական լեյ)


Դժվարին իրավիճակի պատճառով 1992 թ. հունիսի 10-ին, մինչ Դնեստրում մարտեր էին ընթանում, շրջանառության մեջ կտրոններ դրվեցին: Թեև նախատեսվել էին որպես ժամանակավոր միջոց, կտրոնները գոյատևեցին մեկուկես տարի՝ գրեթե մինչև 1993 թ. վերջը, երբ մոլդովական լեյը վերջապես գործարկվեց: Այս ամբողջ ժամանակ կտրոնների հետ մեկտեղ հնարավոր է նաև վճարել ռուբլով:

Աղբյուր Դ

Աղբյուր

Noi.md (2021) 'Acestă zi în istorie: La 10 iunie 1992 au apărut cupoanele moldovenesti' [Պատմության այս օրը՝ 1992 թ. հունիսի 10-ին, հայտնվեցին մոլդովական կտրոնները], 10-ը հունիսի, <https://noi.md/md/economie/aceasta-zi-in-istorie-la-10-iunie-1992-au-aparut-cupoanele-moldovenesti>, դիտվել է 2023 թ. հոկտեմբերի 4-ին:

Մոլդովական ժամանակավոր կտրոնների օրինակներ



Աղբյուր Ե

Աղբյուր

MD 1 leu av.jpg, Wikimedia Commons, public domain, https://commons.wikimedia.org/wiki/File:MD_1_leu_av.jpg, դիտվել է 2023 թ. դեկտեմբերի 5-ին:

Մոլդովական լեյ



1993 թ. նոյեմբերի 29-ին Մոլդովայի Հանրապետությունում ներդրվեց ազգային արժույթը՝ մոլդովական լեյը:

Խուճբ 3

Աղբյուր Ա

Աղբյուր

King, C. (2002) The Moldovans: Romania, Russia and the Policy of Culture. [Մոլդովացիները. Ռումինիան, Ռուսաստանը և մշակութային քաղաքականությունը] Chişinău, Republic of Moldova: Arc Publishing House, էջ 190-191։

Աղբյուր Բ
Աղբյուր
<i>IPN (2021) ‘Scolile românești din stânga Nistrului se confruntă cu numeroase presiuni, Promo-LEX’ [Դնեստրի ձախ կողմի ռումինական դպրոցները բազմաթիվ ճնշումների են ենթարկվում, Պրոմո-ԼեՔՍ], 1-ը սեպտեմբերի, https://www.ipn.md/ro/scolile-romanesti-din-stanga-nistrului-se-confrunta-cu-numeroase-7967_1084103.html, դիտվել է 2023 թ. հոկտեմբերի 4-ին։</i>

15 «Հանդիսավոր հրապարակները» ուսումնական տարվա սկզբին և վերջում կազմակերպվող տոնական հանդիսություններ են։ Երեխաները, ուսուցիչները և ծնողները կանգնած են քառակուսու ձևով, երգում են Մոլդովայի օրհներգը և բարձրացնում ազգային դրոշը։ Կս արարողություններն արգելված են Մերձդնեստրում, և այդ պատճառով «հանդիսավոր հրապարակները» վերահսկվում են Մերձդնեստրի իշխանությունների կողմից։ Միջոցառումների ժամանակ մերձդնեստրյան իշխանությունները սովորաբար նաև անջատում են հոսանքը։

Մշակութային ազդեցություններ

Պատմաբան Չարլզ Քինգը Մերձդնեստրի լեզվական և ինքնության խնդիրների մասին

Թե՛ Ռուսասատանում, թե՛ Արևմուտքում Մերձդնեստրի հակամարտությունը հաճախ նկարագրվում է որպես Էթնիկ պատերազմ Ռումինիայի հետ միավորվել ցանկացող Քիշնևի ազգայնականների և Մերձդնեստրի Էթնիկ ռուսների միջև, որոնք վախենում են ընդլայնված ռումինական պետության մեջ ձուլվելուց։ Ամենից շատ ուշադրություն գրաված հարցը մոլդովերենը որպես հանրապետության պաշտոնական լեզու ընդունելու և լատինական այբուբենի անցնելու առաջարկն էր։ Մերձդնեստրում ամենաուժեղն էր հավատարմությունը խորհրդային համակարգին, և այստեղ նաև վտանգ կար, որ լեզվական բարեփոխումները մեծ ազդեցություն կարող էին ունենալ։

Թեև Մերձդնեստրի ապստամբությունն ընդհանուր առմամբ ներկայացվում էր որպես Քիշնևի ազգայնական քաղաքականության դեմ սլավոնական ապստամբություն, 1990 թ. հաջորդած բռնության իրական աղբյուրը քաղաքական Էլիտաների մակարդակում էր։ Խորհրդային Մոլդովայի Գերագույն խորհուրդը, լեզվական բարեփոխման օգտին քվեարկությունից հետո համարձակություն ստանալով, շարունակեց մշակութային և քաղաքական բարեփոխումները։ Մերձդնեստրեցիները, այս քայլերից յուրաքանչյուրն ընկալելով որպես Մոլդովայի` ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և Ռումինիային միավորվելու մտադրություն, նույնպես շարունակեցին անջատման իրենց պատրաստությունները։

Պրոմո-ԼեՔՍ ՀԿ-ի հայտարարությունը Մերձդնեստրյան տարածաշրջանում ազգային մոլդովական դպրոցների խնդիրների մասին

Պրոմո-ԼեՔՍ ասոցիացիայի հավաստմամբ ավելի քան երեք տասնամյակի ընթացքում Մերձդնեստրի տարածաշրջանի ութ ռումինական կրթական հաստատություններ ենթարկվել են բազմաթիվ ճնշումների և սպառնալիքների Տիրասպոլի ադմինիստրացիայի կողմից։ Ասոցիացիան մասնավորապես անդրադարձել է հաստատությունների` սեփական տարածք չունենալու և այն փաստին, որ եղածը վատ է հարմարեցված կրթական գործընթացին, ինչպես նաև զորակոչին և, այսպես կոչված, մերձդնեստրյան բանակում զինվորագրվելու վտանգին, մարդկանց և ապրանքների ազատ տեղաշարժն ապահովելու մարտահրավերներին։

Ռոգիի և Կորջովայի միջնակարգ դպրոցներում հանդիսավոր հրապարակները¹⁵ վերահսկվում են տեղական միլիցիայի կողմից։ Աշակերտներին և ուսուցիչներին արգելվում է երգել Մոլդովայի Հանրապետության ազգային հիմնը և բարձրացնել պետական դրոշը։ «Շտեֆան չել Մարե» ավագ դպրոցը պատշաճ տարածք չունի, և աշակերտները ստիպված են ամեն օր տասնյակ կիլոմետրեր անցնել դպրոց հասնելու համար։

Պրոմո-ԼեՔՍ ասոցիացիան նշել է, որ դպրոցների առջև ծառացած խնդիրներն ու սպառնալիքները ինքնըստինքյան կվերանային, եթե Ռուսաստանի Դաշնությունն իրականացներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները Մոլդովայի Հանրապետության Մերձդնեստրի շրջանում կրթության իրավունքի խախտումների վերաբերյալ։ Դատարանը որոշել է, որ Ռուսաստանի Դաշնությունը պատասխանատու է Մերձդնեստրի շրջանում մարդու իրավունքների, այս դեպքում՝ կրթության իրավունքի խախտման համար, բայց Ռուսաստանի Դաշնությունը մինչ օրս հրաժարվում է այս վճիռները կյանքի կոչելուց։

Հավելված II

Տնային առաջադրանքի աշխատանքային թերթիկ

Չարց	Պատասխան
Քանի՞ տարեկան էիք Դնեստրի պատերազմի ժամանակ։ <p>Ինչո՞վ էիք զբաղվում։</p>	
Ինչպե՞ս իմացաք պատերազմի մասին։ <p>Ինչպե՞ս էիք ձեզ զգում։</p>	
Ինչպե՞ս էին մեկնաբանում պատերազմը ձեր համայնքում։ <p>Ինչպե՞ս է պատերազմն ազդել ձեր համայնքի վրա։ <p>Տեղյա՞կ եք պատերազմում ձեր համայնքի ունեցած որևէ ներդրման մասին։</p></p>	
Արդյո՞ք պատերազմն այսօր ազդում է ձեզ վրա։ <p>Ի՞նչ եք մտածում պատերազմի մասին այսօր։</p>	

Ձեր համայնքը կամ ընտանիքը որևէ կորուստ կրե՞լ է

կամ որևէ մեկին կորցրե՞լ է պատերազմում։